ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ   ՆԻՒ ԵՈՐՔ. ԱՊՐԻԼ 15, 1894   ԹԻՒ 7

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D.   202 West 23d St. New York, N. Y.   Vol. IV, 1894

ՆՈՐ ՀԱՍՑԷ «ՀԱՅՔ»Ի

«Հայքի» ուղղեալ ամենայն գրութիւնք պէտք է յղուին այսուհետեւ հետեւեալ հասցէին.—

139 West 22 St., New York

Խմբագրատան տեղափոխութեան պատճառաւ ՀԱՅՔի ներկայ թիւն մի քանի օր ուշ կը հրատարակուի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դաս մը «Արմենիայի» Խմբագրին.— Հնչակեան կուսակցութիւն.— Սուլթան Համիտի Քաղաքականութիւնը. Նամակ Կ. Պոլսէ։— Նամակ ի Կարնոյ. Հայրենասէր Կէրէքցեանի Նահատակութիւնը.— Ցետնայեաց Ակնարկ մը. Ռուս Զարհուրականք.— Այլեւայլք։

Ապրիլ 16ին Կ. Պոլսէն կը հեռագրեն զհետեւեալն—

Տեղեկութիւն հասաւ հոս թէ դէպ ի Ռուսիա գաղթող Հայոց կարաւան միյարձակում կրած է քրդային խմբէ մի, որով Հայոցմէ ստուար թիւ մի սպաննուած է։ Վերջերս Հայք մեծ բազմութեամբ կը գաղթեն ի Ռուսիա՝ Թուրք կառավարութենէն ի Հայաստան դժգոհ լինելով։ Ազատուողներն յաջողեցան ի սահմանագլուխն ժամանել ընդ պաշտպանութեամբ ուրիշ հայ խմբոց։

*
*   *

Պոլսէն հեռագիր մի կը ծանուցանէ թէ կայսերական հրամանաւ փակուած է Մայրաքաղաքին իրաւագիտական վարժարանն։ Իպրահիմ Հ. էֆէնտի որ իբրեւ օսմանեան պատուիրակ ի Շիքակոյ եկած էր Քոլոմպեան Արուեստահանդէսին, վերադարձած է Միացեալ Նահանգներէն այնպիսի ազատական գաղափարօք պատուաստուած որ իւր վերջին դասախօսութիւնք յիրաւագիտական Վարժարանին պատճառեց մեծ յուզում կառավարական շրջանաց մէջ։ Նորա գաղափարաց անդրադոյն տարածումն խափանելու համար հրաման եղաւ որ վարժարանն փակեն։

*
*   *

Ոմանք կը հարցնեն թէ կարո՞ղ ենք «Հայքի» 1894 տարւոյս առաջին թիւէն յղել անոնց որք դեռ նոր բաժանորդ գրուիլ կ՚ուզեն.— կը պատասխանեմք թէ կրնամք յղել առաջին թիւէն, և կը փափաքիմք ալ որ նոր գրուողներն տարւոյն սկիզբէն հաշուեն և այնպէս վճարեն, որով թէ իրենք ամբողջ տարեկանն կ՚ունենան և թէ մեք թուականներու մանր հաշիւներ բռնելու չեմք ստիպուիր։

ԴԱՍ ՄԸ

«ԱՐՄԵՆԻԱՅԻ» ԽՄԲԱԳՐԻՆ

«Արմենիա» լրագրի խմբագիրն անկարողկը գտնուի հրաժարիլ իւր վիճելու հին եղանակէն: «ՀԱՅՔԻ» 1893 Մարտ 1ի թուով մեք իւր հին յարձակմանց պատասխանած էինք և յատկապէս կոչ արած որ հաճի ցուցնել քաղաքն ու՛ր՝ և լրագրի թիւն յորում խօսած և գրած եմք ինչ որ մեզ վերագրած էր ինքն, սակայն լուռ ու մունջ մնաց, և ժողովուրդն կըրցաւ իմանալ թէ մինչև ո՛րպիսի զրախօսութեանց կը դիմանի մեր ճարահատեալ հակառակորդն: Այնուհետև մեք իւր յարձակմանց առջև լռութիւն պահեցինք տասն և չորս ամիս, միշտ մաղթելով որ զգօնանայ: Մխիթարական փոփոխութեան նշոյլ տեսանք արդարև թերթին մէջ վերջին երկու—երեք ամիսներս, և սակայն նորէն յուսախաբ եղանք կարդալով իւր քննադատական յօդուածն որ կը կրէ «Մեր Անհասկացողութիւն» խորագիրն: (Տես 50 և 53 թիւերն:) Ինքն գրած է այդ յօդուածներն այն եղանակաւ որ իւր արժանապատուութեան վայել երեւցած է, և մեք կուգամք պատասխանել որպէս արժան կերևի մեզ ի շինութիւն հանրային մտաց և ի լուսաբանութիւն ազգային խնդրոց:

«Արմենիա» նախ կը հարցնէ թէ «Հայք» որ «հայ ժողովրդին առաջնորդելու յաւակնութիւնն ունեցած էր..., գոնէ ո՞րչափ տեղեակ էր Հայաստանցիների վիճակին և պահանջներին և ի՞նչ կը հասկնար Հայկական Խնդիր ասելով:» «Արմենիա» այս հարցի պատասխան կուտայ «Հայքի» Ա. տարւոյ 3դ, 4դ և 5դ թուերով հրատարակուած մեր երկար խմբագրականին (Օսմանեան Պետութիւնն և Սուլթան Համիտ Բ. խորագրով) վերջին յօդուածէն հետեւեալ տողերն ծայրաքաղելով ու քով քովի դնելով.—

«Հայկական խնդրոյն լուծումն պարտիմք խնդրել Տաճկական խնդրոյն լուծման մէջ: Պարտիմք մեք հայ գործիչքս միաբանիլ Թուրք ազատասէր կամ բարեկարգական գործիչներու հետ: Հարկ է նաև կարգել հայաշատ գաւառաց վերայ Եւրոպացի ուղղամիտ և կարող կառավարիչ մի: Կ'երդնում ես ձեռն ի վերայ խղճի թէ մեք Հայքս անկախ լինելու հետամուտ չեմք, այլ կը բաղձամք մեր Թուրք հայրենակցաց հետ մէկ ազգ լինիլ:»

Մեր պատուական հակառակորդն այդ նախադասութիւններ քաղ հաներ է երեք խոշոր սիւնակներու մէջէ՝ բոլորովին ի բաց թողլով մեր պատճառներն ու բացատրութիւններն: Կոչում անելու ի՛նչ բարեխիղճ կերպ:

Աւելի զարմանալի է որ այդ տողերու մէջ յանուած գաղափարներուն դէմ չի խօսիր բնաւ, այլ կը շատանայ զայնս յիշեցունելով որպէս ակնյայտնի մոլորութիւններ: Նա միշտ խոյս կուտայ ոևէ փափուկ խնդիր լիովին քննելէ և յստակ ուսումնասիրութեան նիւթ անելէ. միայն հարևանցի կը շօշափէ ու կ'անցնի: Մեք կը հարցնեմք թէ մեր այն ընդհանուր տեսութեան ո՞ր գաղափարներն թիւր կ'երեւին յաչս իւր, և ինչ են իւր համոզումներ այն սեղ բացատրուած խնդրոց մասին:

Եթէ մեր այն տեսութիւն այնքան երկար չլինէր, պիտի արտատպէինք զայն ամբողջովին, զի չկայ անդ գաղափար մի զոր այսօր ալ կրկնել չուզէինք, և չկայ միտք մի զոր «Արմենիա» հերքելու փորձ արած լինի: Եթէ ընթերցողք աչքէ անցունել հաճին այն ուսումնասիրութիւն, պիտի տեսնեն թէ ջանացած եմք ցուցնել Հայոց պահանջներուն համաձայնութիւնն օսմանեան ճշմարիտ շահուց հետ, և նշանակած եմք կառավարելու այն սկզբունքն որ Սուլթանաց պետութիւնն անկումէ փրկելու այնքան կը ծառայէ որքան Հայոց արդար պահանջմանց գոհացումն տալու: Յօդուածն՝ փոքր ի շատէ հասկացող և ազատամիտ ամեն Թրքի բանաւոր պիտի երեւէր, իսկ մոլեռանդ Թրքերն գրգռելու բնութիւն չունէր: Իբրև գործնական փաստ ցուցած եմք Զուիցերիական ազգն, որ գերմանացիներէ, Ֆռանսացիներէ և Իտալացիներէ կը բաղկանայ, բողոքականներէ և հռովմէականներէ, ունի երեք պաշտօնական լեզուներ, և սակայն շնորհիւ քանդոններուն ինքնավարութեանըն է ազգ խաղաղ և համերաշխ: Թուրքիա ևս տարբեր ցեղերովն ու լեզուներով և կրօններովն հանդերձ կրնայ կազմել մի

պետութիւն, մի ազգ, եթէ ինքնավարութեան արժանի ցեղերուն կամ նահանգներուն կամաց կամաց շնորհէ ինքնավար վարչութիւն, ոկսելով Հայաստանէն որ քան զամենայն խաղաղ, կրթասէր և ընդունակ ցեղն կը պարունակէ։ Մեր պահանջն նուազագունի իջեցուցած ենք այն յօդուածի մէջ, քանզի յայժ համեստ շափէն ալ մեզ կը բաւէ եթէ գործադրութեան երաշխիք ունենայ. և այդ երաշխիքն համարած ենք հայաշատ գաւառաց վերայ եւրոպացի ուղղամիտ և կարող կառավարչի մի կարգումն, և այդպիսի կառավարչի մի կարգումն թելադրուած է այն պատճառաւ որ 61դ յօդուածն ստորագրող մեծ պետութեանց կամ նոցա գոնէ միոյն օգնութեան և հսկողութեան պարտքն կ'ենթադրէ։

Եթէ «Արմէնիայի» իմբաղիրն ժամանակ ունի լուրջ ուսումնասիրութիւն անելու, իրեն կը յանձնարարեմ ուշի ուշով և իրրեւ դաս կարդալ ՓԻ Ի ՄԱՐԿԱԼԻ ԱԶԳՈՒԹԵԱՆՑ ՎԵՐԱՑ ԲԱՂԱԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ (1), յորմէ պիտի տեսնէ թէ որպիսի հիմանց վերայ կը կենայ մեր փաստաբանութիւն։ Այսօր ևս կը հաւատամք մեք թէ Օսմանեան պետութիւնն փրկելու եթէ ոևէ հնար կայ, այն ալ վերոյիշեալ կերպով զԹուրքաի վերակազմու ոկիսիլն է։

Մեր պատուարժան պաշտօնակիցն գայթակղած լինիլ կերեւի այն մեր կարծիքէն ևս թէ հայ գործիչք թուրք ազատամիտ գործիչներու հետ պարտին միաբանիլ, և թէ արժան է Հայկական իրընդրոյ լուծումն խնդրել թրքական խնդրոյն լուծման մէջ։ Տակաւին այսօր իսկ համարձակօրէն կը յայտարարեմք թէ բաղձալի է մեզ որ Օսմանեան պետութիւնն կործանմանէ ազատի լուսամիտ բարեկարգութեան շնորհիւ։ Օսմանեան տէրութեան պահպանումն հայկական շահուց նպաստաւոր է, բայց այն պայմանաւ որ Սուլթան Համիտ ինքն կամ իւրայիններն ազատամիտ քաղաքականութեան հետեւին։ Բարե՛կամ, մտածեցէք, եթէ այսօր Թուրքիա կործանի, այդ չպիտի նշանակէ Հայաստանի վերականգնում. պիտի նշանակէ աւելի քաղաքակիրթ և աւելի հզօր տէրութեան մի ենթարկիլ։ Այդ պարագայի մէջ Հայքը անշնչան դրից և դուցէ յոռի բաղդի դատապարտուինք իբրեւ ազգութիւն, քանի որ դեռ տհաս և տկար ենք։ Սակայն եթէ Թուրքիա այժմ կամ մօտ ապագայի մէջ իրական բարեկարգութեանց շաւղին մէջ մանէ և Թրքահայք օսմանեան վեհապետութեան ներքեւ ազատ լինին կրթուելու և զարգանալու, կէս դարու մէջ շատ կը զօրանան թուական, նիւթական և բարոյական ուժերով, և եթէ դժբաղդաբար օտար տէրութիւն մի այնուհետև տիրէ Թուրքիոյ, Հայք յարգելի և զօրաւոր կը դանուին և Հայաստան ինքնօրէն կը մնայ կամ կ'ելնի։ Իսկ եթէ Թուրքք ինքեանք ևս զօրացած և յառաջդիմած լինելով դիմանան և իրենց կայսրութիւնն պահպանել բաւեն, ինքնօրէն Հայաստանն նոցա պետութեան հզօր մէկ անդամն և պատուարն կը լինի։

Հայ գործիչներուն միաբանիլն Թուրք ազատականաց հետ նոյնպէս բաղձալի է տակաւին մեզ, թէև երեք տարիէ ի վեր շատ նուազած է այդ կարգի Թուրք գործիչներու թիւն։ Այսպիսի միաբանութեան մի պատշաճութիւնն նախորդ փաստին հետ կապուած է յայտնապէս։ Եթէ մեր խնդրոյն լուծման բաղձալի եղանակն է օսմանեան պետութեան յառաջադէմ և ազատական գծի վերայ դրուելով պահպանումն, դիւրին է տեսնել թէ Հայք աւելի կրնան յաջողիլ և նուազ զսհուիլ եթէ օսմանցի լուսամիտ հայրենասիրաց աջակցին, որպէս զի կառավարութեան ներկայ խաւարամիտ և բռնաւոր եղանակն ոևէ խաղաղական կամ յեղափոխական միջոցներով փոխելու մէջ Հայք միայն չաուժեն, Հայք միայն չկրեն շարչարանքն, բանտարկումն, աքսորն մինչ անդին հարատահարեալ Թրքերն անտարբեր կը կենան։ Այսօր Հայք միայն կը թափեն արիւն, իրենց դէմ ունենալով ոչ միայն զեղծ կառավարութիւնն այլ և տառապեալ Թրքերն ու բարբարոս Քրդերն։ Դուք ի՞նչ կը կարծէք, Հայք այսպէսով կրնա՞ն Թուրք կառավարութիւնն կործանել կամ բարեկարգել. չէ՞ք վախնար թէ դուցէ չկարենան երկար դիմանալ այս անհաւասար մրցման մէջ և յոգնած իյնան։ Ո՛րքան աւելի լայս կ'ունենայինք դիմանալու և յաջողելու եթէ հայ գոր-

(1) Les NATIONALITES, Essai de philosophie politique, par Pi Y Margall, traduit de l'espagnol.

ծիշք ոմանք Թուրք ազատականաց հետ միաբանած լինէին և նոցա առաջնորդութեամբ Թրքական շարժում մ'ալ սկսած լինէր ։

Անցնինք այժմ մեր հակառակորդին միւս ամբաստանութիւնն քննելու ։ Նա կ'ասէ ՀԱՅՔ-ի համար. «որովհետեւ այդ Թերթ նպատակ ունէր իմէ առաջ ծնած բոլոր միութիւնները կործանել, ճիզուիթական դարձուածով նախ Հնչակին գովեստներ կարդաց, անոր հետ միացած փնասելու Արմէնիայի գործունէութեանը. ապագային պահելով Հնչակի դէմ իր արշաւանք, յայտարարեց թէ «գոհ ենք կարենալ ասելու թէ Հնչակեան կուսակցութիւնն մեր յեղափոխական ընկերութեանց քան զամենայն հզօրն և կանոնաւորն է, յորմէ կրնամք իրական ծառայութիւն սպասել ։»

«Արմէնիա» այս տողեր կ'առնու «Հնչակեան կուսակցութեան» վերայ մեր առաջին յօդուածէն (ՀԱՅՔ, Ա. տարի, թիւ 18,) յորում վարանած չէինք մեղադրել Հնչակեաններն թէ ինկած էին «այն սխալին մէջ որ, ըստ Կիզոյի, հասարակ է յեղափոխականաց, այն է փորձել աւելին քան զոր կարող են ի գործ դնել, չառնուլ զկարելին իբրեւ չափ և սահման իրենց ձգանց ։» Նաև նշանակած էինք մի և նոյն յօդուածի մէջ «Հնչակեանց ծրագրին մէկ գլխաւոր թերին», այսինքն թէ դիւանագիտական միջոցներու եւս կարեւորութիւնն ճանաչել» չեն ուզած ։ Հնչակեան ծրագրի 9րդ երեսէն ի մէջ բերած էինք հետևեալ տողերն — «Որ և է պատերազմ մղած այս կամ այն օտար պետութեան Թիւրքիայի դէմ՝ պէտք է համարել յարմար րոպէ յեղափոխականների համար իրենց մօտակայ նպատակը իրագործելու, միակերպ զօրութեամբ յետ հրելով ու հալածելով ինչպէս Թիւրք պետութիւնը, նոյնպէս և ամեն մէկ օտար տէրութեան որ դիտաւորութիւն կ'ունենայ հայ ժողովրդին դրաւել իր գիրկը..։» Ծրագրի այդ խօսքերն յիշելէ յետոյ ասած էինք «դիւրին է գրել այդ խօսքեր թղթի վերայ.... Հնչակեանք պարտին համոզուիլ թէ հայ զինուորական ոյժն այնքան դժուար կը գոյանայ և այնքան փոքր պիտի լինի զի անկարելի կ'երեւի թէ անոր զօրութեամբ հայկական խնդիրն լուծուի յաջողապէս՝ առանց դիւանագիտական միջոցներու ։»

Հնչակեանց նկատմամբ ինչ որ ասած եմք այդ յօդուածի մէջ, կը կրկնեմք նաև այսօր ։ Նոքա ունին գովելի և պարսաւելի կողմեր, և մեք առաջին օրէն նշանակած եմք անաչառ կերպով թէ՛ գովելի և թէ՛ պարսաւելի կողմերն ։ «Արմէնիա» վայրապար կ'աշխատի զմեզ երբեմն Հնչակին «միացած» ներկայացունելու ։

Ո՛չ, այն ատեն «Հնչակի միացած» չէինք, որպէս մեր հակառակորդն կ'ուզէ հաւտացունել, և այժմ ալ Հնչակեանց թշնամի չեմք այլ միայն քննադատիչ ։ Թշնամի չեմք, զի նոքա մեծ մասամբ անկեղծ և հայրենասէր երիտասարդներ են, բայց որովհետեւ բաւական հեռատես չեն ու սխալ սկզբամբք կը գործեն, կը ջանամք համոզել զնոսա լաւագոյն ուղղութեան հետեւելու, կամ գոնէ չափաւորել իրենց չափազանցութիւններն ։ Մեր բարեկամութիւնն դէպ ի Հնչակեաններն անկեղծ է ։ Ճշմարիտ բարեկամն չի շողոքորթեր, չափազանց գովեստ չի տար, և երբ իւր բարեկամն սխալ ուղղութեան մէջ մտած գտնէ, կ'աշխատի ցուցնել սխալն, թէպէտ աչքէն ելնել և դժպհի լինիլ հարկ լինի ։ «Արմէնիա» ի՛նչպէս կարծէ թող կարծէ, շատ Հնչակեաններ կան այժմ որք գիտեն թէ ՀԱՅՔ «կեղծաւոր» չէ այլ անաչառ, և թէ իւր քննադատութիւնք ոևէ «վատ և նախանձոտ կիրքերի ծնունդ» չեն, թէ ՀԱՅՔ «անձնական թագուն նպատակների» չի ծառայեր ։ Այդպիսի աղտեղի քննադատութիւններ և մրոտումներ անելու կը խոնարհի միայն Պարոն Փորթուքալեան ։ Հնչակեանք շատ մոլորած են ինչ ինչ նկատմամբ, և սակայն կրիւք կուրացած զրպարտութիւններ չեն աներ, ուստի և նոցա դէմ իբրեւ քննադատ ելնելով հանդերձ՝ յարգանաց զգացում կը կրէ ՀԱՅՔ առ նոսա ։ Դեռ անցեալ օր իրազեկ Հնչակեան մի խոստովանեցաւ մեզ թէ «Հայք» 1894ին շատ յաջող կը լինէր նիւթապէս եթէ միաբանած լինէր Հնչակի ։ Եթէ «Արմէնիա» ուզէր կրնար իմանալ թէ անցեալ տարի ոչ սակաւ բանակցութիւն կատարուեցաւ Ամերիկայի Հնչակեանց և Հայքի միջեւ, որ եթէ Հայք յօժարէր դէմ չխօսիլ Հնչակեանց, Հնչակեան թղթակցութիւններ Հայաստանէն պիտի յղուէին Հայքի մէջ հրատարակուելու, որով և բնականապէս նիւթական նպաստ պիտի լինէր այս թերթին՝ գէթ բաժանորդաց բազմանալովը

Հնչակեանց մէջէն։ Մեք այն ատեն յայդպիսի միաբանութիւն գալու համար ինչ ինչ բարեփոխութիւններ առաջարկեցինք Հնչակեան ծրագրի մասին, որք չընդունուեցան, և մեք որոշեցինք չմիանալ այլ օգնել դրսէն, և մեր օգնելու կերպն է առանց կրից և առանց թշնամութեան քննադատել, ի չափաւորութիւն, ի խոհեմութիւն յորդորել այդ կուսակցութիւնն «յորմէ իրական ծառայութիւն սպասել» դեռ ներելի է, եթէ գտնուին միաբանեալ խոհեմ գործիչներ յօգուտ գործածելու Հնչակեանց շարժումներն։ Հնչակեանք իրենց բոլոր անխոհեմութեամբն հանդերձ կարեւոր բան մ'արին, այսինքն Սուլթանին ժանիք ցուցին, այլև այլ գաւառներու մէջ նորա կառավարութիւնն նեղութեան. չըփոթութեան մատնեցին, Եւրոպացւոց առջեւ թուրք կառավարութեան տկարութիւնն՝ վատութիւնն ու անճարակութիւնն աւելի ևս մերկացուցին։ Բ. Դուռն տեսաւ թէ Հայք ալ կարող են կարեւոր խռովութիւններ յարուցանել եթէ չեն կրնար անզսպելի ապստամբութիւն գործել։ Այժմ եթէ չնորհքով և քաջ պատրիարք մի ունենայինք, կրնար Բ. Դրան վերայ ազդել, կրնար անկեղծ շեշտով ասել թէ հակառակ իւր կամաց իւր ժողովրդեան մէջ դժգոհութեան բուռն ցոյցեր անելու միտումն կը տարածուի, թէ օսմանեան ինչպէս նաև հայկական շահուց համաձայն կը լինի Հայերուն բարեկարգ կառավարութիւն մի տալ. կրնար նաև եւրոպական դեսպանաց ազդել և նոցա աջակցութիւնն ձեռք բերել։ Բայց քանի որ այդպիսի պատրիարք մի չկայ, կշիռ ունեցող ազատական գործիչներու կեդրոնական միութիւն մի կարող է այդպիսի ներկայացումներ անել Սուլթանին և դեսպանաց։ Ժամանակ է այդպիսի ձեռնարկ մի անելու, զոր եթէ այս կամ այն գործիչն առանձին անէ, աւելի վնաս կը հասցունէ քան օգուտ, բայց եթէ միաբանեալ մարմին մի կազմուի և ձեռնարկէ կրնայ արդիւնաւոր լինիլ։ Հնչակեանց յախուռն և անարտօնեալ շարժումներն այդ կերպով ահա կարելի է ազգային դատին ծառայեցունել։ Բայց «Արմենիա» «Լամէնի» և այլգործիչներ աւելի կը սիրեն գանգատիլ քան միաբանութեամբ ձեռնարկել յաջողութեան վերածելու այն թիւր ուղղութիւն որ այնքան սուղի նստաւ Հայոց։

Հնչակ կը գանգատի թէ անցեալ տարի Սասնոյ օգնութեան հասնելու հրաւէր կարդաց բայց Հայեր չլսեցին, ուստի և ահա Սասուն կը կործանի և Մշոյ դաշտն կ'ամայանայ։ Լամէնի միւս կողմէն կը գանգատի թէ Կլատսթրն և ազատականք ոչ ինչ արին յօգուտ Հայոց։ Ուրեմն, ըստ Հնչակի, Հայք իրենք իրենց օգնելու փոյթ չեն ունեցած և, ըստ Ձերազի, Եւրոպա մեզ ձեռնտու լինելու անհոգ գտնուած է։ Այս բաներուն դէմ գանգատիլ իրաւունք լինի կամ ոչ, հարկ է հնարիլ անել ինչ որ այս տուեալ պայմանաց մէջ յօգուտ հայ դատին անել հնար է։

Կը կրկնեմք այժմ մեր առաջարկութիւնն, որպէս զի յստակ լինի—

Պէտք է արտասահմանի գործիչներն անգամ մի ի մի վայր գան, եթէ ոչ միայն միաբանութիւն մի կազմելու, գոնէ խորհրդակցութեան համար, և միասնական դիմում մ'անեն եւրոպական պետութեանց և թէ Բ. Դրան։ Այսպիսի դիմում մի այս միջոցին կրնայ բաւական ազդեցիկ լինիլ քանզի Բ. Դուռն Հայոց իլրտմանց երեսէն բաւական տագնապեալ է և մեր պահանջմանց գոնէ ըստ մասին գոհացում տալու կրնայ աւելի համոզուիլ այժմ՝մանաւանդ եթէ մեծ պետութեանց ամենն կամ ոմանք ալ միջնորդեն։ Թէ ինչպէս պէտք է բանաձեւել Հայոց պահանջներն, զայն կրնան գործիչք ի միասին խորհիլ և որոշել։ Եթէ մեր թերթք յօժարութիւն ցուցնեն, կրնան երկուքն գոնէ միանալով հրաւէր ուղղել մնացելոց ալ և ժողովի մի համար կարգադրութիւններ անել։

Սուլթանն դժուար կրնայ արհամարհել այդպիսի ժողովի մի ներկայացումն, քանզի յայտնի է թէ այդ խնդիրն արհամարհելով յեղափոխականաց թիւն ու շրջանն ընդարձակած և աւելի մեծ խռովութեանց մատնած պիտի լինի իւր պետութիւն։

«Արմէնիայի» կը հարցնեմ թէ ի՞նչ է իւր ըսելջ տեսութիւնն այս առաջարկի մասին։ Նոյնն կը հարցնեմ Հնչակի, Լամէնիի, Արայի և Անկլօ-Արմինիերնի մեր յարգելի պաշտօնակցաց։

ՀՆՉԱԿԵՐՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Երբեմն հեռուէն միայն կը դիտէինք այդ կուսակցութիւն, իսկ այժմ որ ճիւղեր ունի ի Միացեալ Նահանգս և կուսակցութեան հիմնադիրներէն մին ասա է, աւելի մօտէն տեսնելու և դրեթէ շօշափելու դիւրութիւն ունիմք։ Տարիէ մ'ի վեր Հնչակեանք շատցած են այս երկրի մէջ, Հնչակ թերթն շատ կը կարդացուի, և հիմնադիրն յաճախ կը խօսի ժողովոց մէջ։ Ժողովրդի փոքր մէկ մասն տարօրինակ եռանդով յարած է Հնչակեան կուսակցութեան, կանոնաւոր անդամ եղած է, և յեղափոխական, ընկերվարական, տնտեսական բոլոր գաղափարներն որդեգրած է ամբողջովին— հասկանալո՞վ որդեգրած է կամ թէ ո՞րքան տարբեր հասկանալով, զայն դժուար է ասել։ Կան նաև ոմանք ալ որք ընկերվարական գաղափարներն կը մերժեն բայց յեղափոխական գաղափարն կ'ընդունին Հ.Կուսակցութեան։ Թէ կարելի՞ է ինքզինք հնչակեան կոչել առանց ընկերվարականութիւնն ընդունելու, զայդ ալ ասել մեզ չէ անկ։ Կայ երրորդ կարգ մ'ալ որ Հնչակեանց ամեն բանն կը մերժէ, միայն նոցա եռանդն ու յարատեւութիւնն կը գովէ։

Մեք կը կարծեմք թէ Հ.Կ. իրեն ճշմարիտ հետեւողներ, այսինքն ընկերվարականներ, յոյժ սակաւ ունի, և այն յոյժ սակաւուց ալ կէսն հազիւ ըմբռնած է կիսկատար թէ ի՛նչ է ընկերվարականութիւն։ Լոկ յեղափոխական գաղափարին համար Հ.Կուսակցութեան համակրողներն ալ կը կարծեմք թէ սակաւ աւելի կը լուսաւորին և բանին իսկութեանն կը թափանցեն։ Նոքա կայր հետեւողներ լինելէ դադարելով կամաց կամաց կը սկսին իրենց առաջնորդներուն մտքին և ընթացքին ազդել։ Ոմանք ալ դրսէն ազդելու մտօք կամ բոլորովին անկախ կերպով յօդուտ հայրենեաց գործելու փափաքով ըսկսած են նոր ընկերութիւններ կազմել։ Որքան որ մեք կարող եղած եմք իմանալ նոր ընկերութեանց կազմաւորման առաջնորդող առարկութիւններէն ոմանք հեհեհետեւեալ կետերու մէջ կը բովանդակին։

ՆԱԽ.— Ռուսահայ գործիչներ, լինին Դրօշակեան, Հնչակեան կամ այլ, Թրքահայոց խորհելու և գդալու կերպերն քաջ չեն հասկանար, և օտարականի ոգւով կը գործեն։ Ի հարկէ դոքա կը փափաքին որ Հայաստան ազատի, բայց Հայ ժողովրդեան սրտին, կրօնական և ազգային ըզգացմանց համաձայն վարուելու անկարող են։ Հնչակ փտած հռչակեց զկաթողիկոսութիւնն և դեռ վերջերս Մկրտիչ կաթողիկոսի արժանիքն ու վարկն ստորնացուցնելու բնութիւն ունեցող քննադատութիւններ արաւ։ Այս բան ահագին դայթակղութիւն կը պատճառէ Հայոց, բայց Հնչակի խմբագիրն կա՛մ չի հասկանար կամ հոգ չաներ։ Հոս միայն դայթակղութեան մասին խօսիմք, թէև կրնայինք Հայ եկեղեցւոյ և կաթողիկոսութեան կարեւորութիւնն և մանաւանդ ներկայ Վեհ. Հայրապետի բարձր արժանիքն ցուցնել։

ԵՐԿՐՈՐԴ.— Ռուսահայ գործիչներ Թրքական բռնապետութեան դէմ գործով բողոքելու ատեն՝ իրենք ալ բռնապետական միջոցներ կը գործածեն և մեր ժողովուրդն բռնաւորութեան կը վարժեցուցնեն փոխանակ ազատասիրութեան կրթելու։ ՀԱՅՐի ներկայ թուոյ մէջ հրատարակուած Կարնոյ նամակէն պիտի տեսնեն ընթերցողք թէ Դրօշակեան, Կուկուեան և Հնչակեան Ռուսահայեր ինչպէս կը վարուին իրենց հակառակորդ կամ անհամաձայն համազգեաց հետ։ Կէրէքցեան անուն երիտասարդն Կարնոյ առաջին գաղտնի յեղափոխական ընկերութեան գլխաւոր անդամներէն էր, և ընկերութեան մատնուելէն յետոյ չորս կամ հինգ տարի բանտարկութիւն կրած էր Կարնոյ մէջ։ Զգոն, ուշիմ և հայրենասէր մարդ էր նա, և ուստի Ռուսահայ գործիչներուն կերպին չհաւանեցաւ, աւելի զգուշութեամբ, խոհեմութեամբ, ներքին և արտաքին պատրաստութիւններէ յետոյ՝ ի պատեհ ժամուն շարժելու հարկն նշանակեց. և զայդ անելուն համար իբրեւ Հայաստանի փրկութեան արդելք ու վնասակար մարդ մահուան դատապարտուեցաւ ռուսահայ գործիչներուն կողմանէ և զարնուեցաւ մեռաւ։ Կարնոյ ժողովուրդն լալիւն մեծ լացաւ այդ ծանօթ և անմեղ հայրենասիրի վերայ և յուղարկաւորութեան ահագին հանդէս կատարեց։ Արդ, դիւրին է ըմբռնել որ Թրքահայ ժողովուրդն դայթակղի, շարաչար դայթակղի ռուսահայ գործիչներու այսօրինակ գործողութիւն-

ներէն: Եւ ո՞ր լուսամիտ մարդ չի գայթակղիր երբ տեսնէ թէ ազատութեան ախոյեաններն սոսկալի բռնաւորութեամբ կը վարուին իրենց այն արենակցաց հետ որք չեն համաձայնիր իրենց, որք ազատութեան հասնելու խաղաղական և յեղափոխական միջոցներու մասին իրենցմէ տարբեր համոզումներ ունին:

Բռնաւորութեան այդպիսի միտում հասարակ լինիլ կ'երեւի բոլոր ռուսահայ կուսակցութեանց, թէև կարող չեմք ասել թէ արդեօք ո՞րպիսի մարդիկ էին, կամ թէ բնաւ անկեղծ մարդ ու հայրենասէր չկա՞ր անո՛նց մէջ և ո՞րք Հնչակեանց կողմանէ սպաննուեցան ի Թուրքիա այլ և այլ ժամանակ ու տեղ: Նոյն իսկ այս Ամերիկոյ ազատ հողին վերայ Հնչակեանք իրենց ընդհանուր ժողովներուն մէջ տեսակ մի բռնութիւն կը գործածեն որոյ դէմ աւելի քան մի հայրենակից բողոքած է և մեզ մանրամասն տեղեկագրած: Հնչակեանք կը փափաքին որ բոլոր Հայեր երթան իրենց ժողովներուն, լսեն, համոզուին, և որոնք որ կրնան խօսիլ՝ ատենախօսեն, բայց այն պայմանաւ որ Հնչակեանց դէմ չխօսին: Սրահին վարձքն իրենք վճարած են և իրենց նպատակն է տարածել այն գաղափարներ որք ճշմարիտ կը թուին իրենց: Կը «թու՞ին» ասացի, սխալեցայ: Հնչակեանք այդ բառ վերուցած են իրենց բառարանէն ու բառբառարանէն: Նոքա գիտե՛ն թէ իրենց գաղափարք, քաղաքական և ընկերվարական համոզմունք ճշմարիտ են. կարծիք, թուիք, այնպիսի երկբայական ու թէական բան չկայ: Եւ իրենց այդ խոր և վստահ համոզումներու շնորհիւ է որ ուրիշներու տարբեր համոզումներն չեն կրնար յարգել, և չեն թողուր որ իրենց դէմ ոև է հարեւանցի քննադատութիւն անէ ատենախօսն: Իրենց այդ անձուկ ու խոր համոզմանց մէջ ի հարկէ չեն տեսներ թէ ի՛նչ օգուտ ունի իրենց դէմ ոև է դիտողութիւն անել, քանի որ իրենց համոզմունք անփոփոխելի և յաւերժական ճշմարտութիւններ են: Քննադատութիւնն ա՛յն ատեն լաւ է երբ ճշմարտութիւնն երեւան հանելու կրնայ ծառայել, բայց քանի որ Հնչակեանք ճշմարտութիւնն գտած են, այլ և ս իրենց դէմ խօսիլ առարկութիւն յարուցանել աւելորդ է և միայն պարզամիտներն շփոթեցունելու կը ծառայէ. ուրեմն թող լռեն ու մունջ կենան հակակարծիք եղողներն:

Երկու շաբաթ առաջ Հնչակեան ժողովի մի մէջ կանխադրոյն որոշմամբ վիճաբանութեան նիւթ եղած է հետեւեալ հարցն — «Թէ բուն Հայաստանէն դուրս՝ Թուրքիոյ այլ դաւառաց մէջ յեղափոխական շարժում անել լա՞ւ է թէ վնասակար:» Այդ վիճաբանութեան առթիւ Հնչակեան մի ա՛յնքան տաքցած է որ յառաջ գնացեր է մինչև յայտարարել թէ անոնք որ Հնչակեան չեն՝ վատակ են: Այդ այլանդակ խօսք արտասանող երիտասարդն մեզ ծանօթ համակրելի և ուսեալ ոք է, և այդ պատճառաւ ալ ծանր նշանակութիւն կ'առնու խօսքն: Մեք իրաւունք չունի՞մք վախնալու թէ Հնչակեան կուսակցութիւնն զարմանալի ազդեցութիւն մ'ունի իրեն յարողներն չափազանց մոլեռանդ և անթոյլատու անելու: Երիտասարդն ա՛յնքան լիովին համոզուած է թէ Հ. Կ. ազգն փրկելու միակ կարող և աշխատող կուսակցութիւնն է որ չի՛ կրնար հաւատալ թէ անկեղծ հայրենասէր մի կարող է անկէ դուրս մնալ: Դուրս մնացողներն ազգադաւեաց, խաւարամիտ կամ մատնիչ են— գրեթէ վատակ: Այնպիսիք չիք լինին աւելի լաւ է: Ահաւանիկ ոլորամաբանելու հնչակեան եղանակ: Չեմք կարող ասել թէ մեր երիտասարդք ինչ տեսակ կրթութենէ, հրահանգներէ ազդուելով կը սովորին բռնաւորութեան, բայց սա յայտնի կ'երեւի թէ հնչակեանութեան պտուղներէն մին է բռնաւորական միտումն:

Վերի երկու կէտերն են Ամերիկայի մէջ ոչ-հնչակեան միութեանց կազմաւորման տեղի տուող խորհուրդներէն ոմանք:

Հնչակեան կուսակցութեան յարած մեր սիրելի եղբայրներ թող խորհին լրջօրէն այդ կէտերու վերայ և ջանան իրենց ռուսահայ պետերուն ուշադրութիւնն հրաւիրել:

Մեք անկեղծօրէն կը նշանակեմք ռուսահայ գործիչներուն թէ իրենց ընթացքի դայթակղական հանգամանքն ի՛նչ են, և թէ ինչո՛ւ չեն յաջողիր աւելի կարեւոր հայրենակիցներ իրենց կողմ գրաւել: Եթէ կը փափաքին որ ժողովուրդն իրենց հետեւի և լուսամիտ անհատք իրենց օգնեն, պէտք է խորապէս փոփոխեն իրենց ծրագիր և գործելու եղանակ:

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ.Ի

ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷ

Կ. Պոլիս, 26 Մարտ, 1894

(Ոչ Հայազգի բժիշկ մի ուղղած է մեզ հետեւեալ Նամակն, զոր կը թարգմանեմք հայերէնի։)

... Փաշային հետ բաւական մտերմացած լինելով երբեմն չահեկան խօսակցութիւններ ունեցայ իւր հետ։ Ինքն Թուրքիոյ քան զամենայն լուսաւորեալ և կըրթեալ փաշաներէն մին է։ Օր մի հարցաւ թէ ի՞նչ էր կարծիքս, Թուրքիոյ ժողովուրդք կը բազմանայի՞ն թէ կը նուազէին։ Ես ասացի թէ Տաճկաստանի բնակիչք մանաւանդ Թուրք ժողովուրդն կը նուազէր։ —Ի՞նչ է պատճառն ըստ քեզ, հարցաւ ինձ փաշան։ —Թէ ինչ է պատճառն կը կարծեմ դիտնալ, սակայն չեմ ուզեր այդպիսի փափուկ խնդրոյ վերայ խօսիլ, չիցէ թէ ձեր դիւրազգայնութիւններն վիրաւորեմ։ —Ամենեւի՛ն, ասայ խօսակիցս, ամենեւին չեմ վիրաւորիր ես թէև իմ կարծեաց հակառակ կամ ինձ անհաճոյ լինին ձեր դիտողութիւնք. կը խնդրեմ ազատօրէն յայտնէք։

Պատասխանեցի ուրեմն ազատօրէն և ցուցի թէ Թուրք ժողովրդի նուազելուն երեք պատճառներ գիտէի. նախ՝ ոտքի վերայ կեցող բանակին մեծութիւնն և առողջապահական վատ պայմաններն։ Երկրորդ, Հաճճ երթալու կրօնական սովորութիւնն։ Երրորդ, բազմակնութիւնն. շատ Թրքեր տեսած էի ես բազմակին, որք սակայն չէին բազմածին. հին ատեններ գերի կիներ կը գնէին, այժմ այդ չկայ։ Միոյ առն երկու կամ երեք կանայքն զանազան պատճառներով չեն ուզեր զաւակի տէր լինիլ, եղեռնական վիժումնք սոսկալի կերպով յաճախ են, և ի վերջ հաշուի կը տեսնուի թէ երկու կամ երեք կին ունեցող այրն նուազ զաւակ կ'ունենայ քան մէկ կին ունեցողն։

Ուրիշ օր մի Սուլթանին քաղաքականութեան վերայ խօսք բացինք։ Փաշան կը թուէր վախնալ սենեկի պատերէն իսկ, այնպէս ցած և գգուշաւոր ձայնիւ կը խօսէր։ Ջինքն մեղադրել չէի կրնար. մարդը դողալու իրաւունք ունէր։ Այդ ատմառն էր որ այնքան նշանաւոր և բանիբուն փաշաներ, կարող և կրթեալ աւագորեար մեռան յանկարծ յանկարծ։ Յակոբ Փաշա Գազազեան միայն չեղաւ զոհ, ճէմիլ Փաշա, և այլ 10—15 ջոջեր, ոմանք Պոլսէն և այլք գաւառներէն հրաւիրուած լինելով, մի զմիոյ կնի մեռան, յանկարծամահ եղան Խորէն Արքեպիսկոպոս Նարպէյի պէս...։ Իմ բարեկամ Փաշան ալ կը խիթայր, և յիրաւի։

Ես ալ մեղմագին ձայնիւ ասացի թէ Սուլթան Համիտ, որքան գիտնալ կարող էի, կ'աշխատի երկու բանի համար. ինքզինք արքունի գահուն վերայ ամուր պահել և օսմանեան գահն ամրացունել։ Համիտ հասարակ կայսր մի չէ, ունի իրեն յատուկ հատատուն համոզումներ, զօրաւոր քաղաքականութիւն։ Ըստ իւր համոզման ինքն և միայն ինքն գիտէ զօրացունել Սուլթանաց գահն և ծաղկեցունել օսմանեան կայսրութիւնն. Այդ նպատակին համար ամեն նոր և յանդուգն միջոց գործածելու պատրաստ է։ Եւ իրօք ալ պետութիւնն փրկելու համար ձեռք առած է միջոցներ, բայց ա՛յնպիսի միջոցներ որովք կը փութացունէ օսմ. կայսրութեան քայքայումն։ ԺԹ դարու մէջ ինչ մատաւոր և և բարոյական յառաջդիմութիւն որ իրագործուած էր Թուրքիոյ մէջ, ամենն ջնջել կ'աշխատի. երկրին փրկութեան ծառայելու ձիրք և յարմարութիւն ունեցող հազուագիւտ Թրքերն բոլոր կը բառնայ ի միջոյ, գրեթէ սպառեց լմնցուց։ Սուլթան Համիտ այդ կոտորած տարիներէ ի վեր կը շարունակէ անձայն ու լռիկ և կը ջանայ այդ կերպով Թրքական յեղափոխութեան առաջնորդ և գործիչ լինելու բոլոր մարդիկն ջնջել՝ յապահովութիւն իւր Թագին։

Փաշան տխուր և յուսարեկ կախեց իւր գլուխ որուն վերայ վատահ չէր։

Ես այդ Թուրք փաշային շատ համակրեցայ, վասն զի ինքն յոժար էր իրեն կարծեաց հակառակ կարծիք լսելու։ Եւ եթէ չեմ համակրիր Համիտի, պատճառն

այն է որ նա իրեն հակակարծիք եղող թրքերն կը ջնջէ իրրեւ արգելք օսմանեան երկրի փրկութեան։ Այս է կատարեալ բռնութիւն, խաւար դարերու վերադառնալ։ Ներկայ ժամանակի քաղաքականութեան սկզբունքն է մրցումն։ Տե՛ս յԱմերիկա, յԱնգլիա, ի Ֆռանսա, ի Գերմանիա, ամեն քաղաքակիրթ երկրի մէջ գլխաւոր երկու կուսակցութիւնք կան, որոց մէկն միւսին հետ կը մրցի շարունակ, ժողովրդեան կը ներկայացունէ իւր յայտագիր և քաղաքական համոզումներ, կը շահի քուէից մեծամասնութիւն և կ'անցնի կառավարութեան գլուխն։ Ժամանակ մի յետոյ դիմադիր կուսակցութիւնն կը յաջողի քուէից մեծամասնութիւնն շահիլ և կառավարութեան ղեկն ձեռք առնուլ։ Մրցման միջոցներն են ճառ խօսիլ, լրագրական անդուլ պայքար, հանրային կարծիքն շահելու գործեր, բարեկարգութիւններ կատարել։ Երկու կուսակցութիւնք փոփոխակի կառավարելով գերկիրն՝ կը մրցին մի քան զմի աւելի ծառայութիւն մատուցանել ժողովրդեան։ Կուսակցութեանց այդ ազատ մրցումն է այժմու կառավարութեանց ոգին ու բարւոք վարչութեան երաշխիքն։ Ի՞նչ կ'անէ սակայն Համիտ, նա փոխանակ սահմանադրութիւնն ի գործ դնելու և երկու կուսակցութեանց մրցման ասպարէզ բանալու յօգուտ երկրին, բոլորովին կը ջնջէ ազատական կուսակցութիւնն և երկիրն անդամալուծութեան, փտութեան կը դատապարտէ։ Ինքն իսկ է ամեն բան ամեն կուսակցութիւն։ Ուստի և բոլոր խելացի թուրքք կ'ատեն զնա սրտիւ ու կը գովեն շրթամբ։

Ցաւոք սրտի կ'իմանամ թէ Հայեր ալ որ նոր կը սկսին քաղաքական կուսակցութիւններու սաղմեր կազմել, դեռ հասկացած չեն ազատ մրցման սկզբունքն, ոմանք իրենց դիմադիրներն նախատելով և գրպարտելով կ'ուզեն յաղթել, և ոմանք Սուլթան Համիտի պէս սպաննելով և մէջտեղէն վերցուցնելով։ Ձեր պարտաւորութիւնն և փառաւոր գործն թող լինի ազատ վիճաբանութեան և ազատ մամլոյ միջոցով կարծիք շինել ու ստեղծել, մրցքերն լուսաւորել։

ՇԱՌԼ

ՆԱՄԱԿ Ի ԿԱՐՆՈՅ

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԿԷՐԷՔՑԵԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՆ

Կարին, Մարտ 12, 1894

Կէրէքցեանի պատմութիւնն Կարնոյ վերջին 15տարիներու շարժմանց պատմութեան մէջ շատ կարեւոր երես մի կը կազմէ։ Շատ բան պատմած պիտի լինիմ ձեր ընթերցողաց՝ պատմելով համառօտիւ Կէրէքցեանի մահուան դէպքն։

Այս այն Կէրէքցեան է որ Կարնոյ նշանաւոր գաղտնի ընկերութեան գլխաւորներէն մին էր և ընկերութեան մատնուելէն յետոյ աւելի քան չորս տարի մնաց ի բանտի։ Արձակուելէն զկնի ալ կը գործէր որպէս կը վայլէր փորձառու, խոհեմ և հինցած գործիչի։ Բայց ասպարէզն առաջուան պէս չէր, գործիչներ ծրագիրներ, ուղղութիւններ շատ էին. անփորձ երիտասարդներ Ռուսիայէն եկած՝ կը քարոզէին այնպիսի բաներ որ ձախող կ'երեւէին դաշտին վերայ հինցած զինուորի մի, որպիսի էր Կէրէքցեան։

Նորեկ և անփորձ գործիչներուն կ'ասէր նա ինչ որ փորձառութիւնն և պարագայք ժամանակին ու միջավայրին կը թելադրէին, նա կը պնդէր թէ երիտասարդներն աւազակախմբի կամ հրոսախմբի վերածելու ժամանակ չէ. թէ նախ հարկաւոր է աւելի խոր և ընդարձակ պատրաստութիւններ կատարել, և սահմանակից տէրութեան մի մէջ ապաստանարան ապահովել փախչելու ստիպուողներուն։ Ո՛չ, կ'ասէին ռուսահայ գործիչներ, պէտք է որ երիտասարդք լեռներն ելնեն, արդէն ժամանակ է. պէտք է փութալ և յուսալ թէ դէպքերն պիտի ցուցնեն հնարք ու ճանապարհ և պիտի արթնցուցնեն օտարի համակրանքն։— Զէնքն ո՞ւստի պիտի գտնեն երիտասարդք.— Թող հրդերէն և զօրքերէն խլեն։—Հա՞ց։— Հրդաց ոչխարաց միսն թող ուտեն։— Ապաստանարա՞ն։— Լերանց ծերպք և անտառաց խորք։

Կէրէքցեան կ'աղաչէր ու կ'ասէր. Եկէք։ լսեցէք ինձ, ազգի փողն ու արիւնը այդ կերպով մի վատնէք. այդ եղա-

նակով զոհեր միայն պիտի տամք և մեր թշնամին պիտի բոլորովին արթնցունեմք, սաստիկ հսկողութեան տակ այլ ևս չպիտի կարենամք լաւ պատրաստութիւններ կատարել: Մեր երիտասարդք պիտի բանտարկուին ու մեռցուին իբրեւ աւազակներ: Արդէն զոհ շատ տուինք առանց լաւ արդիւնքի: Պէտք է մեր քայլերն ամենայն զգուշութեամբ առնումք: Տղայական անփորձ շարժումներու շրջանն փակեմք և մարդու պէս գործելու ոյժ պատրաստեմք:

Այս խրատներ շատ խակ և վնասակար երեւցան խակ ռուսահայ նորեկներուն, որք զայրացան Կէրէքցեանի դէմ և իբրև Հայաստանի փրկութեան արգելք զինքն մեռցունել որոշեցին: Մի կեղծ նամակ գրեցին տուին Տարօնացի Ցակոբի որդւոյն թէ․ «քո հայրն Կէրէկցեան Խաչատուրի խորհրդակցութեամբ մեռցուեցաւ, և շատ զարմանալի է որ դուն զայն քեզի անկեղծ բարեկամ կը ճանաչես․ եթէ դու զինքն չմեռցունես փութով, նա զքեզ ալ սպաննել պիտի տայ...:» Տարօնացին նամակին եցոյց իւր բարեկամին, քննեցին, և յայտնուեցաւ թէ ճշմարիտ չէր:

Հոս ներեցէք որ փակագիծ մի բանամ և յիշեմ Տարօնացւոյ մահուան պարագայքն: Ես զայս նոյն ինքն Կուկունեանցի նախկին ընկեր Նազարէթ աղայի շրթունքէն ականջովս լսած լինելով կը պատմեմ: Նազարէթ աղայ ասաց ինձ․ «Երբ ես չհամաձայնուեցայ Կուկունեանցի հետ և տեսայ թէ ծրագիրն փոխել անհնար է, բաժնուեցայ խմբէն․ Կուկունեան միջոցներ գործածեց զիս սպաննելու բայց չյաջողեցաւ: Ցակոբ Տարօնացին միաց Կուկունեանցի հետ՝ անխոհեմ ընթացքէ ետ կեցունելու նպատակաւ: Միքանի օր վերջ լսեցի թէ երկու երիտասարդ ընկերներ զարկեր են զինքն երբ գիւղ մի կ'երթային ի միասին:»

Դառնամք մեր բուն պատմութեան: Վիճակ կը ձգեն, և Արամ անուն երիտասարդին կ'ելնէ վիճակն, և սա կը ստիպուի զԿէրէքցեան սպաննելու գործն ընդունել, թէև նորա մտերիմ բարեկամն էր: Ես ինքնս Արամի շատ ծանօթ էի, և կը դիտէի թէ այդ միջոցին նա խոր տրտմութեան մէջ էր, բայց չէր ուզեր յայտնել ինձ իւր հառաչանաց պատճառն: Ա․ կը համոզէ զԿ․ շրջագայութեան երթալու, ինչպէս յաճախ կ'անէին: Քաղաքէն հեռու կը գնան․ Ա․ պատճառանօք կ'անցնի ընկերին ետև և վեցհարուածեան ատրճանակով կը կրակէ: Կ․ ետ դառնալով կ'ասէ․ «Հասկացայ, Արա՛մ, կրկնէ հարուածդ և լմնցուր:» Ա․ նորէն կը հարուածէ: «Փախ՛իր այժմ, կ'ասէ Կ․, ազատէ անձդ, չիցէ թէ բռնուիս և տկարութեամբ մատնութիւններ գործես:» Արդէն ընկերներն պատրաստութիւն ունէին և զԱրամ յաջողեցան փախցունել: Ցաջորդ օրն քաղաք կառավարութեան առջև բերուեցաւ Կ․, որ դեռ հոգին փչած չէր և կրնար հարցմանց պատասխանել: Կառավարութիւնն իմանալ ջանաց թէ ինչո՞ւ սպաննել ուզած էին զինքն․ Կ․ պատասխանեց թէ Արամ առաջնորդարանի գրագիր էր, և ինքն պատճառ եղած էր անոր պաշտօնանկ լինելուն, կ'երևի թէ այդ պատճառով թշնամացեր էր իրեն: Պաշտօնեայք պնդեցին իմանալու համար թէ ազգային ոև է խնդիր չկա՞ր արդեօք: Նահատակն ժխտեց կրկին և կրկին թէ ո՛չ: —Որո՞ւ մեղսակցութեամբ այս ոճիր գործուեցաւ՝ քո կեարծեօք:— Ես, պատասխանեց, ոչ ոքի դէմ կասկած ունիմ․ Այսպէս պատասխանեց նա, թէև գիտէր գործին շարժառիթն և իւր բոլոր հակառակորդներն: Հարուածին վերայ 26 ժամ միայն ապրեցաւ: Մեծ հանդիսիւ քաղաքացիք կատարեցին հայրենասէր նահատակին յուղարկաւորութիւնն և շատ ողբացին այդ աղետալի եղեռին ու անդարմանելի կորուստին վերայ:

Անկէ ի վեր Կարնոյ մէջ երկու որոշ կուսակցութիւն կան— Կէրէքցեան և Արամեան, և իրենց մէջ սպանութեան խնդիրն կայ ու կը շարունակուի: Կէրէքցեանի եղբայրն Տիգրան դաշունով սպաննեց Արամի մէկ մտերիմ ընկերն վրիժառութեամբ, և այժմ Տփղիսի մէջ բանտարկուած կը մնայ:

Կէրէքցեանի սպանութեան դէպքէն մի տարի վերջ ես մեկնեցայ Կարինէն Մուշ գնալու: Երբ կանցնէի միջակայ գաւառէն..., ուր մնացի մէկ ամսոյ չափ, պատահեցայ այնտեղ մի գործիչին, որ իւր ընկերաց ասաց թէ գիտէր ես ո՛վ էի և ինչու գնացեր էի: Երեկոյ մի զիս կանչեց և հարցաքննեց թէ ո՞ր տեղացի եմ, ուր կ'երթամ, ևն: Եւ երբ պատասխանեցի թէ մէկ ամսոյ չափ պիտի մնայի անդ, ինձ ասաց

—իրաւունք չունիս այդքան երկար մնալու, եւ եթէ ազգային գործի խառնուիս անշուշտ պիտի սպաննուիս։ —Ես վստահացուցի զինքն թէ կուսակցութիւն կազմել կամ նոր գործ մի սկսիլ չէր իմ գործըս։ Բայց նա կը կարծէր թէ Կարինէն կուսակցութեան մի կողմէն գաղտնի պատուիրակ էի ես։ Իրաւ ես մի բան անել ուզեցի, թէև անյաջող մնացի, այն էր հաշտեցունել նոյն գաւառի մէջ իրարու սաստիկ թշնամացած և իրար սպաննելու փորձեր անող երկու գործիչներ։ Այդ դիրք շատ վնասած և շփոթած էր երիտասարդութիւնն։ Նոր գործիչն հնախտէ մեռաւ սակայն և ասպարէզէն խառնաշփոթութեան մի տարր պակսեցաւ։

ԱՑՃԵԱՄՆ

ԱԺԱՆ ԳԻՐՔ

Ապրիլ 1էն մինչև Յունիս 30, 1894, հետեւեալ գրքերն կը վաճառուին զեղջեալ գներով որպէս ի ստորև—

«Հայք»ի Ա. տարին 1 տոլար կամ 5 Ֆր.
,, Բ. ,, 1 ,, ,, ,,
,, Գ. ,, 1 ,, ,, ,,

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ 50սէնթ կամ 2 Ֆր. ու կէս։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ 10 սէնթ կամ 50 սանթիմ։

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, որոյ գինն է 10 սէնթ և ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔ որոյ ևս գինն է 10 սէնթ, եթէ 5 օրինակի գինն միկէն կանխիկ վճարէ ոք (այսինքն 50 սէնթ կամ 2 Ֆր. ու կէս), կը ստանայ ուրիշ հինգ օրինակ ալ ձրի։

«Խրիմեան Հայրիկ» և «Հայ Բողոքականութեան Անցեալն ու Ապագայն» աշխատութիւններէն սակաւաթիւ օրինակներ միայն մնացած լինելով, սովորական գներովն կը վաճառուին։

ՅԵՏՀԱՅԵԱՑ ԱԿՆԱՐԿ ՄԻ

ՌՈՒՍ ԶԱՐՀՈՒՐԵԿԱՆՔ

LES TERRORISTES RUSSES

(Շար. և վերջ, տես նախորդ թիւն)

Կոլտէնպէրկ կը յայտարարէ թէ ապրած է և պիտի մեռնի սոսիալիստ Հաւատքով. բայց ներքնօրէն համոզուած գոլով թէ փորձեալ ճգունք զուր են և անօգուտ ի յարուցանել ռուս ժողովուրդն, ինքն կը բաղձայ պրծել երկիրն այս սպանութեանց փոխանակումէն, որք կը գործուին կարգաւ ի ձեռն յեղափոխականաց ի վերայ իշխող տարրին, և ի ձեռն իշխողաց՝ ի վերայ յեղափոխականաց։ Փափաքելով վերջ տալ արեան անօգուտ հոսման և վստահ ի գթութիւն Լորիս Մելիքոֆի, կ'որոշէ ի վեր հանել գաղտնիքն ու մարդիկն իւր կուսակցութեան, այն յուսով թէ կառավարութիւնն պիտի հրաժարի վրէժխնդրութենէ և թէ Ռուսիա կարող պիտի լինի վերջապէս կատարել խաղաղ կերպիւ իւր շրջափոխութիւն դէպ ի լաւագոյն ընկերային վիճակ մի։ «Ես զանձն իմ կը նուիրեմ ամենուն համար, կ'ասէ, յուսալով թէ ես կը լինիմ վերջին զոհն այս տխուր դիպմանց. եթէ այդպէս չլինի, գիտցէք թէ իմ եղբարց արեան իւրաքանչիւր կաթիլն դարձեալ պիտի փոխարինուի իւրեանց դահճաց արեամբն։»

Անցնելով իրողութեանց պատմութեանըն, Կոլտէնպէրկ կը սովրեցունէ մեզ յեղափոխական կուսակցութեան փոխակերպութիւններն։ Մինչև ցամն 1876, ռուս սփռիչք զատ զատ կը կենային, և վարանոտ էին, առանց վարդապետութեանց և առանց հասարակաց կապերու։ «Հող և Ազատութիւն» լրագիրն որ անկանոն կերպիւ երեւեցաւ 1874էն ց1876, կը ներկայացունէր միայն յուզիչներու փոքր խըմբակ մի՝ առանց գաւառային ճիւղաւորմանց։ Ի վերջկոյս 1876 ամին ժողովրդային կոչուած կուսակցութիւնն յեղափոխական միջավայրէն դուրս եկաւ կազմակերպու-

թեան սազմով մի և արդէն աւելի որոշ ծրագրով մի։ Իւր անդամք ընկերվարական սկզբունքն սփռելու կ'աշխատէին։ քաղաքային և դաշտային խմբակներ հաստատուեցան աստ անդ, ի յարաբերութեան Փեդէրացուրկի կեդրոնական խմբին հետ, որ սահմանած էր միւսներուն հայթայթել նիւթական միջոցներ, կեղծ անցագրեր, գրեան և լրագրեր։

Ի մէջ 1878 ամին, Նոր սերում մի յառաջ եկաւ ժողովրդային կուսակցութեան ծոցէն և զարհուրական կուսակցութիւն անունըն առաւ։ Ժողովրդի Կամքն ալ սոյն այլամիտ կոտորակին բերանն եղաւ։ Նա կը պահանջէր բուռն գործողութիւն ի զարհուրանս կառավարութեան և հանրային կարծեաց։ Զարհուրականութեան հաւատացեալք զգալով թէ աւելի հզօրապէս կազմաւորելու և իրենց յայտագրին չփոթ կէտերն պարզելու պէտք ունին, համաժողով մ'արին ի Լիփէդզք, 1879ի Յուլիս ամսուն։ Դամսլափ գաւառին այդ փոքր քաղաքին մէջ Կոլտէնպէրկ հաւաքեց 15 ընկերներ որոց անուններն կուտայ։ Նիստերն տեղի ունեցան ցայդ, մօտակայ անտառին մէջ։ Հոն ծածուկ կառավարութիւն մի կազմաւորեցին, որոյ երկու գործարանքն էին «Ղեկավարաց յանձնաժողովն» և «Գործադիր Մասնախումբն։» Առաջինն ունէր ղեկավարել բոլոր զարհուրական շարժումն, հայթայթել հարկաւոր միջոցներն և որոշել բռնութեան գործերըն ըստ պահանջման պարագայից. երկրորդին անկ էր հնա'րիլ ի գործ դնել այդ որոշումներն։ Գլխաւոր յուզիչք բաժնուեցան այդ երկու մասնախմբոց մէջ, որոց իւրաքանչիւրն ութէն տասն անդամէ կը բաղկանայր։

Այնուհետեւ կը պատմէ Կոլտէնպէրկ թէ բռնութեան ինչ գործեր կատարած էր զարհուրական կուսակցութիւնն մինչև նոյեմբերի վերջն, յորժամ ինքն ձերբակալուեցաւ, և այդ թուականէն ասդին դատախազային տեղեկութիւններն ենթադրութեանց և թուեաց մէջ կ'իյնար։

Հարցփորձն սկսաւ ներկայ ամբաստանելոց։ Քվիաթքովսքի և Շիրաէֆ, քան զամենայն աւելի ծանրապէս ամբաստանեալք, լաւ պատասխանեցին։ Առաջինն ճիշդ բառերով արտայայտեց իւր միտք, առանց տկարութեան և առանց յոխորտանաց։ խոստովանեցաւ, ինչ ինչ սեղմամբք, իւր մասնակցութիւնն արքայասպան փորձերուն։ Շիրաէֆ աւելի ազդու տպաւորութիւն թողուց, իւր խօսքերն բարձր ձայնիւ արձակեց առանց դարձուածքի. իբրեւ այր ոդի ի բռին։ Զէօնտէլէվիչ հրէայն աւելի տատամսելով պատասխանեց ամբաստանութեանն թէ ղեկավարող Յանձնաժողովոյ անդամ էր։ Թիչինոֆ և Օլատսքի ուրիշ եղանակաւ, ռամիկ խրոխտանօք պատասխանեցին։ Նուաստ Քոպիւիլինսքի ջանաց բոլորովին ուրանալ իւր մեղսակցութիւնն ի սպանութեան Քրաբոդքինի։ Մնացեալք ժխտեցին առաւել կամ նուազ իրենց ընծայուած իրողութիւններն, ասելով թէ երկրորդական գործօններ էին ինքեանք, անգիտակ ընդհանուր ուղղութենէն։ Սապասողն Կուլիչ պատմեց թէ ինչպէս ապանդին յարած էր ինքն, իւր պատմութիւն հրահանգիչ էր նկատմամբ սփռչութեան կերպերուն ի գաւառս։ Կանանց երկուքն անվարան խոստովանեցան իրենց աշխատակցութիւնն ծածկասիպ հրատարակութեան գործոյն մէջ։

Դատաստանի չորունակման յաջորդօրերուն մէջ ամբաստանեալք իրենց առաջին կացքն պահեցին։ Թիչինոֆ Օքլատսքի և Քոպիւիլինսքի երեւցան ես քան զես որսի անսատուններ, առանց անձնական գաղափարաց, և խօսեցան կոչ յապստամբութիւն արձակելու համար միայն կամ այնպիսի համոզումներ արտայայտելու զորըս չեն սահմաներ։ Երեք գլխաւորներն անյողդողդ մնացին։ Յայտնեցին իրենց հայեացներն, հայեացք կարի խառնափնդոր, ռուս ընկերութեան փոխակերպման նկատմամբ զոր կը տենչային և կը տենչան դեռ կատարել ուրիշ միջոցներով։

Յետին կամ վեցերորդ օրն դատավարութեան՝ ամբաստանեալք վերջին անգամ մ'ալ խօսեցան։ Երեք պետք կրկնեցին իրենց նախկին խօսքերն, որք Քվիաթքովսքի հետեւեալ յայտարարութեան մէջ կը բովանդակին— «Իրողութիւններն չեմք ուրանար։ Ձենէ կախուած է վերջ տալ մրցման մի որմէ ամենս ալ ձանձրացած եմք։ Ձեր տալու վճռոյն նայելով մեք և մեր դեռ ազատ եղբարք ուրախութեամբ պիտի վերադառնամք օրինական աշխատութեան շրջանն ի յաղթութիւն մեր գաղափարաց, կամ թէ վէրքն աւելի պիտի խորանայ, և մեր յաջորդք յակամայից

պիտի առնուն մեր ձեռքէն ինկած զարհուրելի զէնքերն։» Կիներէն մին— այս թշուառ սղայ մ'է բերեր ի բերդին— խնդրեց մասնակից լինիլ իւր ընկերաց բաղդին՝ ինչ և իցէ այն։

Դատարանն 13 ժամու խորհրդակցութենէ վերջ՝ բերաւ իւր վճիռն, որով գըլխաւոր հինգ ամբաստանեալք կախուելու դատապարտեցան, միւսներն մշտնջենաւոր կամ ժամանակաւոր աշխատանաց, երեք կանայքն՝ յաքսոր ի Սիպերիա։

Դատարանէն դուրս ելանք աւելի յստակ ծանօթութեամբք այդ զարհուրական կուսակցութեան նկատմամբ— թէ կայր է Ռուսիա վտանգաւոր գաղտնի ընկերութիւն մի, այլ ոչ թէ կուսակցութիւն մի՝ բառին ճշմարիտ նշանակութեամբն։ Կայսրութիւնն տարիէ մ'ի վեր սարսափած էր 25 կամ 30 հաստատամիտ ոճրագործներու երեսէն։ Համեմատական արժանիքի տէր մի քանի մարդիկ յուսահատ կերպով կը յուզուին ագէտներու և մոլորելոց փոքր միջավայրի մի մէջ։ Կըրնայ ոք թուել զայնս կոլտէնպէրկի խոստովանանքէն յետոյ։ Երկու մասնախմբերն կազմաւորեալ ոև է զօրութեան չեն հրամայեր, այլ իրենք կ'որոշեն և իրենք ի գործ կը դնեն ոճիրներն։

1880—1881ի ձմեռն ձերբակալմունք շարունակեցան։

Մարտ 13ին, կիրակի օրն, կայսրն ուժանակահար ինկաւ։ Ոճրագործներէն վեցըն ձերբակալուեցան, չորս այր և երկու կին։ Մին արդէն շանթահար եղած էր այն ռումբէն զոր կայսեր վերայ կը նետէր։ Դատն երեք օր տեւեց։ Ներկայ էի դատաստանին։ Վեշտասանից դատին նըման էր այն ևս, և դիտողութիւնքս ալ նոյն եղան։ Ոճրի զինուորներն 20էն 30 տարեկան երիտասարդներ էին, և սովորական զանազանութիւնն կը ներկայացունէին։ Ասոնց մէջէն տարրաբան Քիպալչիչ գիտական ընդարձակ ծանօթութիւններ ի հանդէս բերաւ մեզ երբ իւր ռմբոց բաղդրութիւնն ու մեքենականութիւնն բացատրեց։ Երկու կանանց մին, Փէրովսքայա, զօրավարի աղջիկ դուստր, պաղարիւն և վճռաբան, եղած էր հոգին բոլոր մեղսակցութեան։ Իւր աննշան ֆիզիքական կազմութիւնն չէր թողուր գուշակել, երբ նստաւ նա ամբաստանելոց նըստարանին վերայ, իւր հազուագիւտ բնաւորութիւնն որում վկայեցին իւր խօսք և գործք։ Ամենքն ալ մահուան դատապարտուեցան։

1882 Փետր. 9ի, և 1883 Մարտ 28ի դատավարութիւնք բարձրագոյն ատենին առջեւ բերին արքայասպան ոճրագործներէն մի քանին ևս որք խուսափած էին ցայնվայր։ 1884 Սեպտեմբերին Զօրեքասանից դատն դատապարտութիւն բերաւ Վէռա Ֆիննէի ևս, այդ կնոջ, որ Փէրովսքայայի նման, գերակշիռ դեր կատարած էր բոլոր եղեռնական փորձերուն մէջ։ Բայց այդ ատեն արդէն յեղափոխական շարժումն նոր դարձուած մի ստանալ սկսած էր. ընկերվարականութիւնն էր որ կը սկսէր սփռուիլ։ Բուն զարհուրականութիւնն սպառած էր, և վերջին տասն տարիներուն մէջ անոր հետեւողք, եթէ մնացած են, հրաժարած են բաց պայքարէ։ Տասն տարիներէ հետէ Ռուսիա չէ լսած ուժանակի աղմուկն։

Կրնաք գուշակել եզրակացութիւնն յոր կ'ուզէի գալ։ Այս ահագին ցնցմունք չբերին այն յեղաշրջումներն զորս շատ Ռուսեր և գրեթէ բոլոր օտար մամուլն կը նախագուշակէր «Նիհիլիստներու երկրին» համար։ Ջերմի ճգնաժամն անցաւ առանց հիւանդն սպաննելու։ Ահա այս կրնայ հանդարտեցունել զայնս որք կը կարծեն թէ մեր մէջ ալ մեծ օրն մերձ է որովհետեւ մեր անիշխանականք ալ նոյն ռմբային խաղն կը խաղան։ Այդպիսի կարծեաց և աւինի նորաձեւութիւնք աւելի շուտ կը վերջանան Ֆռանսայում։

Թող իրենց հայեցողութեանց վերայ չափազանց վստահ եղող փորդապետք ալ յիշեն, և եթէ չեն յիշեր, նային այն ժամանակի լրագրոց, ինչ որ կ'ասէին յայնժամ ռուսական բարբարոսութեան մասին—թէ զարհուրականութիւնն ճիւաղական ախտ մ'էր որ Ռուսիոյ մէջ, բացարձակ միապետութեան երկիրներու մէջ կարելի էր, և որոց դէմ ազատ կառավարութիւնք պատուաստեալ պէտք է համարուէին։ Լրագիրք կը մոռնային թէ ոև է կառավարական եղանակ չէ կարող զմարդ պաշտպանել յոռեգոյն յիմարութիւններէ երբ չի գիտէ կամ չի կրնար բնական գործ հայթայթել իւր իմացական զօրութեանց։

ՏԸ ՎՕԿԻՒԷ

(Ռըվիւ տէ Տէօ Մոնտ)

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23d St.,
New York,
U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," եւ

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրի համար
երկու տոլար կամ տասն ֆրանք
կանխիկ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ս. Վարդանանց տարեդարձի հանդէսն ի Սիլիվրիէ.—

Երէկ յեկեղեցւոյ Ս. Աստուածածնի, որ ի Սիլիվրիէ՝ անմահ պատարագ մատուցաւ եղաւ Սրբոց Վարդանանց դիւցազնական նահատակութեան յիշատակելի տօնին առթիւ, ի ձեռն նորընծայ քահանային — Արժ. Տէր Յակոբ Դոստուրեան։ Ներկայ էին Սիլիվրիէի Հայ գաղութն և Օսդրովի (Ռումանիա, սահմանագլուխն) ազգայնոց մի քանիք,— յատուկ հրաւիրմամբ։ Յաւարտ Ս. պատարագի՝ երգեցիկ աշակերտաց երկսեռ դասն ուղղեց զժողովուրդն ի սրահի ազգ. վարժատան, որ չքեղապէս զարդարուած էր ջանիւք Տ. Տ. Կ. Ս. Թ. և Խ. Յ. ի, ուր ճառեր արտասանուեցան ըստ աւուր պատշաճի։ Նախ ի բեմ ելան երկսեռ աշակերտք, յետոյ ելաւ աշակերտաց դաստիարակուհին, Օր. Մ. Յ.։ Ի վերջոյ յաջորդեց Տ. Խ. Ո.։ Սմա յաջորդեց Տ. Մ. Յ. Ա., հակիրճ ուղերձով մի։ Վերջ ի վերջոյ ի բեմ ելաւ Տ. Վետերան, որ սրտաշարժ կերպիւ յարատատուս շարժեց զունկնդիրսն, վերջ տալով հանդիսին։ Ի բեմ ելնող այս ատենախօսաց ամենն ալ ծափահարութեամբ ընդունուեցան։ Նաև de gala պարահանդէս տեղի ունեցաւ յերեկոյին ի սրահի ազգ. վարժատան։

Մ. Ա.

***

Փրովիտէնսէն Մեծ. Տէր Ց. Էքիզեան կը գրէ մեզ թէ Ուստըրի մէջ մեծ ժողով մ'են արած Հայեր, այլև այլ ուրիշ քաղաքներէ ալ բազմաթիւ հայրենակիցներ ներկայ լինելով, և ձեռնարկած են կազմել բազմաճղի և մեծ միութիւն մի։ Այս նոր շարժման մանրամասն տեղեկութիւններն յաջորդ թուով պիտի կրնամք տալ։

***

Մարտ ամսոյ մէջ Էլլիս Այլէնտի ցամաքն ելան 14,376 գաղթականք, որ անցեալ տարւոյ նոյն ամսոյ գաղթականաց թուոյն կէսն է։ Ուրեմն Ամերիկայի գործոց կայուն վիճակին գաղթային հոսանքն մեծապէս նուազեցուցած է։ Անցեալ ամիս հոս հասնող գաղթականաց 3505 էին Իտալացի, 2132 Գերմանցի, 1873 Աւստրո-Հունգարացի, 1787 Ռուս, 1156 Շուէտ, 754 Նորվեկիացի, 792 Իռլանտացի և 582 Անգլիացի։

***

ՆԱՄԱԿ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԼ

Բարեկամ մի նամակի ծոցով ամերիկեան տոլար յղեր է խմբագրութեանս, և նամակն մեզ չէ հասեր։ Այսպիսի անհաճոյ պատահմանց առջեւն առնլու դիւրին միջոց կայ, այն է նամակն ապահովագրել տալ։ Լրագիր ընթերցողներն իրազեկ են թէ որքան յաճախ նամակի գրուիչներ այդպիսի նամակներ գողցած լինելու յանցանօք դատապարտուած են։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔ

Ի Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԷ

«Հայք»էն ինչ ինչ փոփոխութեամբք հանուած այս ուսումնասիրութիւնն կը ծախուի 10 սէնթի։ Հինգ օրինակի գին կանխիկ վճարողն 10 օրինակ կը ստանայ, այսինքն հինգ օրինակ ալ ձրի։

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտաւ մը փօսթի միջոցաւ խմբագրութեանս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ :

ՅԱԿՈԲ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ ԵՂԲԱՐՔ

Ե·ՔԻԶԵԱՆ

EKIZIAN BROTHGRS

30 Eddy St. Providence R. I.

Անցեալ տարուան Միացեալ Նահանգաց դէպի Եւրոպա մեր ունեցած ստակի փոխադրութեան համեմատութիւնն արդիւնաւոր ըլլալուն՝ ներկայիս կը խոստանամք որ ա՛լ աւելի գոհացութիւններ անեմք :

Անոնք որ կը կարօտին ստակի փոխադրութիւններ անել՝ դէպի Եւրոպա կամ Թուրքիոյ կողմերն, ամեն մէկ քաղաքի իրենց համեմատութեամբն կարգադրած ենք որ թէ մեր անձնական տուներու և թէ մասնաւոր գործակատարներու ընդունելութեան պայմանաւ փոխանակագրեր պիտի ծախենք գոհացուցիչ գնով :

Այս նկատմամբ մեր հասցէին գրուած նամակներու մասնաւոր ուշադրութիւն անելով անմիջապէս պիտի պատասխանենք :

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու Նիւ Եորք

26դ. և 27դ. Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱԳՈՐԾ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով: Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր :

Գ. ՏԷՕՔՄԷՃԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ-ԳՈՐԾԱԿԱԼ

Ի ՌՈՒՍՃՈՒՔ

Պատիւ ունիմ ծանուցանել Պուլկարիոյ և Ռումանիոյ պատուարժան ազգայնոց թէ՝ բացի ամեն տեսակ (հայ լեզուաւ) գրեանց և զանազան պատկերներու յանձնակատարութենէ՝ ստանձնած է նաև գործակալութիւնն հետեւեալ հրատարակութեանց.

ԱՐԱՔՍ վեցամսեայ պատկերազարդ. ՀԱՅՔ կիսամսեայ հանդէսներու և ՀԱՅՐԵՆԻՔ ամենօրեայ թերթի:

Յանձնակատարութիւնք կը կատարուին արագ և կանոնաւոր կերպով:

Վճարումնք կանխիկ են:

Հասցէ— K. DEUKMEJIAN
Roustchouk, BULGARIE

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK

27դ և 28դ փողոցաց մէջև

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ի՞նչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր։

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք։

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէր, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ'ընդունին հազար թալէր, եթէ պայմանն հազար թալէրի է, կամ մինչև հինգ հազար թալէր, ըստ պայմանին։

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանագրեալ հազար կամ աւելի թալէրն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի։

Այս մասին հետաքրքիր եղողները «Հայք» ի խմբագիրէն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք գիմնաստիկական կրթութեան, բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կմ 2 ու կէս ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կմ 1 ֆր.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։

Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ